# ԱՐՄԱՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիւրքիոյ և Ռուսիոյ համար տարեկան 23 ֆրանգ
Ուրիշ ամեն տեղերի » » 20 »
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժնէգիները կանխիկ կը վճարուին։ Վեցամսեայ կամ եռամսեայ բաժնորդագրութիւններ ալ կընդունուին, առանց ոևէ յաւելման բաժնէգնին վրայ։
Խմբագիր-Տնօրէնին հետ կարելի է տեսնուիլ խմբագրատունը ամեն օր կէսօրէնյետոյ, ժամ 2էն մինչև 4 մեայն։

Ա ՏԱՐԻ ԹԻՒ 30

1885 ՆՈԵՄԲԵՐ 25

(ՆՈՅԵՄԲԵՐ 13 Հ. Տ.)

ՋՈՐԵԳՇԱԲԹԻ

Կը հրատարակուի Դշ. և Երթ. օրեր

ՊԱՏՄԱՆՆԵՐ

Ծանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Ծանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։
Նամակ կամ ծրար պէտք է ղրկել խմբագրութեան հետևեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*, rue Arménie, 2 (Hôtel Forer), MARSEILLE.

*Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau de la Rédaction (Hôtel Forer).*



ՔՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ լրագրութիւնը. —Անգլիայի հայ գաղթականութեան տուած խնդրագիրը եւ Լօրտ Սոլզպէրիի պատասխանը. —Մի բացատրութիւն։—Նամակ Ռուսիահեն (Սեաստոպոլ)։ —Նամակ Ռուսիահեն (Մոսկուա). —Նամակ Պուկարիահեն (Պիլիստրի). —Հայեր ի Փիւրրիա. —Հայեր Լեգիպտոս. —Հայեր Իթալիա. —Արեւելեան խնդիր. —Պաոետրական. —Ծանուցումներ։


## ՀԱՑ ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Շատ անգամ կը դանդատին Հայերը թէ իրենց հայրենասիրական ձեռնարկները անյաջող կը լինին։ Սորա պատճառները շատ են, բայց այդ շատերէ մին, որին մենք ամենէն քիչ կարեւորութիւն տուած ենք, մեր ազգի և մեր հայրենիքի իսկական վիճակին, կարօտութեան և պահանջներին անծանօթ լինելնիս է, ինչ որ Ֆրանսացուն, Անգլիացուն կամ Յունին, Իւրդին կրնայ պատահիլ, ամեն պարագայի մէջ ալ Հային չկրնար յարմարիլ։ Մի ազգի բնաւորութեան տեղը, դիրքը, ընտանեկան և տնտեսական կեանքը, վերջապէս ֆիզիքական, մտաւորական և բարոյական կարողութիւնները չենք կարող յար և նման գտնել մի ուրիշ ժողովրդի և մի ուրիշ հայրենիքի մէջ ալ։ Հետևապէս ամեն ժողովրդի տեղական պահանջները և դարձելու կերպերը յար և նման չեն կրնար լինիլ։

Ուրեմն եթէ կուզենք մեր հայրենիքի և մեր ազգի համար յաջող ձեռնարկներ անել, պէտք է ուսումնասիրենք մանրամասնօրէն Հային և Հայաստանի դիրքն ու պահանջները։

Այդ բանի համար մեզ միջնորդ կրնան լինել հայ լրագրները։ Նոցա պարունակութիւնները մեզ պիտի ծանօթացունեն հայերի ընթացքին վարչական, կրօնական, կրթական, տնտեսական, քաղաքական տեսակէտներով, նոցա մտածումներին, զգացումներին, պէտքերին և պահանջներին։

Հայ լրագրութիւնը շատ անգամ այդ դերը կատարելու նպատակին չէ ծառայած. նա աշխատած է ընդհանրապէս Եւրոպաի քաղաքական դարձերին և դէպքերին տեսլի ծանօթացունել հայ ժողովուրդը քան թէ բուն իր ազգի, իր հայրենիքի վիճակին։ Մեր լրագիրները մեզ կուզին պարտցունել Անգլիաի թագուհուն պալատի սենեակները, մինչդեռ մենք չդիտեինք դեռ թէ ո՛ր կողմն է մեր տունէ դուրս ելնելու դուռը։ Կլատսթօնի ճառախօսութիւնները և Վիքթոր Հիւկոյի բանաստեղծութիւնները դոյ սերտած ենք, մինչդեռ դաղափար անգամ չունինք և չենք կարող երեւակայել անգամ թէ Հայաստանի մէջ, օրինակ Վանի մէջ, մեր ազգային վարչութեան դէպքը Պօղոս Նուպարեանց, ի՞նչպէս կը վարուի այնտեղ մեր ազգային ժողովների մէջ և ի՞նչ ճառեր կը խօսի արդեօք։ Մեր ազգասութեան, մեր խնդճութեան վրայ չենք ուզեր խօսիլ, չենք ուզեր լսել, այլ օտարին փառք ու պարծանքովը կը չլանանք, կը յափշտակուինք, կոգեւորուինք և կուրախանանք։ Մինչդեռ չէ՛ մէկէ օտարին միլիոններով և միլիարներով ունեցած հարստութիւնները հաշուելու համար թուաբանական խնդիրների մէջ թարթափիլ, մեր միտք յոգնեցունել, մեր ժամանակ ապառել, մինչդեռ մենք մեր տան մէջ ուտելիք հայ չունինք և պարտաւոր ենք ամբողջ օրը մուրով ու մարմնով աշխատիլ, երեկոյին անօթի չմնալու համար։

Հայ լրագիրները և հայ ընթերցողները մեծ մասով այս դրութեան մէջ կը գտնուին։ Նոցա համար ուրիշի հետաքրքիր լուր է իմանալ թէ Վիկտէմ կայսրը որորդութեան գնացած ժամանակ ցուրտ առեր է և այսօր շատ է փունդատցեր կամ թէ Կլատսթօնը սեղանին վրայ գինի խմած ժամանակ իր սեղանակիցին այս ինչ քաղաքական խօսքն է ասեր։ Բայց թէ Ամէնեսի մի գաւառէն մի նամակ դրուած լինի լրագրին մէջ ուր իր ազգակիցների խնդճութիւնները նկարագրուած կը լինին, նա արհամարհանքով կանցնի նորա վրայէն պի իւր բարձր դիրքի և բարձր հմտութեան մէջ ուղղ մի անձի անվայել է այդպիսի թշուառութիւնների նկարագիրները, խիղճների դարձեր կծղդալ։ Ի՞նչ օգուտ, ի՞նչ հարկ որ նա իմանայ թէ ի՞նչ էին պատճառները որ վհատութեան ցաւերը Բարութիւն եպիսկոպոս Կարնի առաջնորդ երամ ժամանակ ժողովուրդը քանիցս բողոքից իրեն դէմ և մի քանի անգամ ծանր խռովութիւններ ծագեցան իր պատճառով. նա մինչև իսկ գուցէ չգիտէր այդ խռովութիւնների գոյութիւնն անդամ։

Նա հետաքրքիր չէ իմանալ թէ Հայաստանի այս ինչ նահանգի մէջ, օրինակ Վանի մէջ, ի՞նչ է պատճառը այն անվերջանալի կռիւներին որ Պօղոս անուն մի վարդապետի, չօրպաճիների և ժողովրդի մէջ կան որոց նկատմամբ մեր տղայ հասակէ ի վեր լսած ենք և կը լսենք այժմ ևս. ո՞վ են այդ անձերը, ի՞նչ կըսեն և ի՞նչ կընեն որ կը յաջողին միշտ իշխանութեան դլուխն անցնիլ հակառակ ժողովրդի բողոքներին. ի՞նչ է պատճառը այդ կռիւներուն որ մերթ մեկուն տակ կը ծածկուին և մերթ կը բռնկին բոցեր արձակելով։ Է՜հ, դլուխ կը ցաւցունէ Հային պէս մի խեղճ, թշուառ ու ազէտ ազգի վիճակին վրայ լսել ու խօսիլ. պատմեցէք մեզ թէ ի՞նչ կըսէ և ի՞նչ կընէ Իշխան Պիսմարք որ կը յաջողի միշտ իշխանութեան գլուխ գտնուիլ, թէև իրեն դէմ մի ջրաղացքի չափ կուսակցութիւն ալ կազմուած լինի. ի՞նչ է պատճառը այն վէճերի որ ամերիկան, ֆրանսական և անգլիական խորհրդարանները զանազան կուսակցութիւնների են բաժնած։ Ահա ձեզ այդ ժամանակ մտիկ կանենք դի այդպիսի բարձր խնդիրների վրայ մտածելով մեծ մարդ կրնանք դառնալ. իսկ Հայի խեղճութիւններին վրայ մտածելով մենք ալ կը խեղճանանք։

Ահա գրեթէ այս ուղղութեան մէջ կը գտնուին մեր հայերէն լրագիրները և մեր ընթերցողների ճաշակն ալ այդ կերպով կրթուած է։

Բայց մեր հետևիլ ուզած մեծ ազդերի ո՛չ լրագիրները և ո՛չ ընթերցողները այդ դրութեան կը հետևին։ Օրինակ, մեր առնենք ֆրանսական լրագիրները և կը տեսնենք որ ընդհանրապէս գրեթէ ամբողջ թերթը իրենց ներքին և տեղական խնդիրներով կը լեցուն են և հազիւ մի քանի տող միայն կատան ուրիշ ազգերի վերաբերող լուրերին, ի բաց առեալ ամենահաբեսյ դէպքերն։

Մենք տասով լսել չենք ուզեր թէ ուրիշ ազգերի խորհրդարանական պօտճներն և մանր մունր լուրեր մեզ հետաքրքրելի չեն թուիր, այլ թէ ամենէն տեղի և ամենէն շատ պէտք է հետաքրքիր լինինք, պէտք է գրուի մեր ազգի, մեր երկրի, մեր հայրենիքի գործերի վրայ, որպէս զի մենք մեզ ճանչենք, մտերմամտօրէն դիտենանք մեր վիճակ, մեր մարդերը ու գործեր և ըստ այնմ դարմանն տանինք։ Մենք դիտենք որ մեր հայ լրագիրները կը հրատարակուին այնպիսի երկիրներուն մէջ ուր տպագրութեան ազատութիւնը շատ անգամ թոյլ չտար որ ազգային գործերի վրայ խօսին. այդ մենք կը հասկնանք. բայց միևնոյն ժամանակ կարելի է լրագիրը հետաքրքիր դարձունել մտնաւորապէս մեր ազգայիներուն տնտեսական, վարչական, կրթական, բարոյական և այլն վիճակին վերաբերեալ տեսութիւններով և լուրերով։

Հայ լրագրութեան մէջ մի մեծ յեղափոխութիւն գործած եղաւ Պարսկաստանի Արեգակը, իսկ «Մշակ» լրագիրը հիմնելով։ Նորա ուղղութիւնը ազգային ուղղութիւն էր. նա իր 12 տարուայ ընթացքով յաջողեցաւ այդ ուղղութեամբ նոր ուղղութիւն դասակարգներ մուցանել Ռուսաստանի հայերին մէջ, արթնցնել նոցա մէջ իրենց տեղական և ազգային կեանքի հետաքրքրութիւնը, մինչդեռ նոյն միջոցին Կ. Պոլսի լրագիրները Վիքթոր Հիւկոի ճառերով և մեծ ազգերի վիճակին վրայ քաղաքական տեսութիւններով կը լեցունէին իրենց թերթերը։

Բայց դուք դարձեալ Տփղիսի մէջ և միևնոյն տպագրական օրէնքի տակ հրատարակուող մի ուրիշ օրաթերթ վեր առէք, օրինակ «Նոր-Դար» և այն ժամանակ կը տեսնէք թէ ի՛նչ մեծ տարբերութիւն կայ «Մշակ»ի և այդ թերթի և իրեն նմանների մէջ։

Հայ լրագրութեան և հայ ընթերցողներին մէջ «ՄՇԱԿ»ի կարեւորութիւնը շատ պզտիկ էր և մենք ուրախութեամբ տեսանք «Մշակ»ի մի նոր թերթը յայտարարութեան վաճառքին հրատարակուած հակառ. 27/8 նոյ. ին։ Այդ թերթի մէջ «Հայոց հատարակութեանը» ուղղուած յօդուածը որ յայտարարութեան դլխաւոր մասը կը կազմէ, մենք կը ծանօթացնենք մեր ընթերցողներին առաջիկայ թուով։

Մ. Փ.

## ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈԳԻ ՎԱՂԱՆԳԱՎՈՐ ՀՈՍԱՆՔԸ ՏԱՎԱՏ ՎԱ ՅԱՒՑԱԲԱՂՈՒՄՆ ՈՐՔԷՍ ՀԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒ

Լօնտօն, 4 Յուլ. 1885

Թիֆլիսէն

Ծ. Ս. Ա. Ա. Ա

(1) Եթե միայն ցանցերը, շրջելուց առաջ, նախ լվանան ջրի մեջ, ապա ձկները, խնամքով հանելով ցանցերից, ամանի մեջ դրվեն սյուդպիսով և ոչ թե ցանցերը ամանի վրա շրջելով, ձկները ամանի մեջ ընկնեն, ապա ձկները ավելի մաքուր կլինեն և ավելի երկար կպահվեն։

Ն. Ս. Ա—ԵՆՑ

ԳՂՋՈՎՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ա Ն Ց Ա Կ Ա Ն

Հանձնաժողովի նիստերի մասին

Ղազարոս Աղայանի անվան գրադարանում, ամեն ուրբաթ, ժամը 5-ին։

## ՀԱՑԵՐ ՅԵԴԻՊՏՈՍ

Դահիրէէն Նոյ. 16 ամսաթիւս մեր ստացած նամակները տխուր կերպով կը նկարագրեն այնտեղի ազգային գործիչների դրութիւնը։ Նոյ. 12 ին, ժողովրդէն մի բաւական բազմաթիւ մաս կը հաւաքուի դպրոցին մէջ, ե֊գիպտոսի ազգային տխուր վիճակին մի վերջ տալու նպատակով։ Մի Դոքտադիր ժողով կը կազմեն որին իրաւունք կուտան ուսումնասիրել այդ տխուր վիճակի պատճառները և նոցա դարման տանելու միջոցները գործադրել, որչափ կարելի է։ Սակայն մի քանիները որոնք իրենք չեն աշխատիր և աշխատողներուն ալ առջև արգելքները կը հանեն, կուգան կը ներկայանան այդ ժողովի և խռովութեան ու երկպառակութեան սերմեր ցանելով հոն, գործը խանգարելու պատճառ կը լինեին։ Ա֊յս քաջութիւն յաղթութեամբ ի գործ դնելէ և ազգին վիճակին վրայ ցաւակցող եռանդուն սիրտերը ցրտութեան դատապարտելէ յետոյ, հանգարտ խղճով կը վերադառնան իրենց տեղեր։ Իսկ այնտեղ հաւաքուած ժողովուրդը դէմկոր կը մնէնի վարժարանէն, մի նոր ապացոյց ևս առնելով թէ հայ ժողովուրդը իր դառն վիճակի դարման տանելու համար, առիթ պատած է մնքառիլ ոչ միայն օտար թշնամիներուն, այլև ներքին հակառակորդներուն դէմ։

## ՀԱՑԵՐ ԻՏԱԼԻԱ

Վենետիկի Ս. Ղազար վանքի Մխիթարեան հայրերն իրենց վանական վերջին Ընդհ. ժողովին մէջ, ի միջի այլոց, պաշտօնատարներուն փոփոխութիւններ ալ արած են։ Վերապատուելի Հայր Դաւիթ Նազարէթեան որ 25 տարի վանքին մէջ աշակերտներ դաստիարակելով պարապած և բաւական երկար տարիներէ ի վեր ևս Վենետիկի Մուրատ—Ռափայէլեան վարժարանի տեսչութիւնը վարած է ամենայն պատուով և աչալրջութեամբ, Կ. Պոլիս մեկնելուն առթիւ, իւր պաշտօն յանձնարեր է Վ. Հ. Գրիգոր Ճէլալեանի որ արդէն տոյն պաշտօն վարած է նախ քան զՀայր Դաւիթ։

Ցոյս ունինք որ Վ. Հ. Գրիգոր ևս, ինչպէս անցեալին մէջ, նոյնպէս և այսուհետև կը չարունակէ բարձր դիրքի մէջ պահել միշտ ազգին առջև այն համարում որվին իրաւամբ արժանացած է Վենետիկի Ս. Ղազարի վանքը իւր արդիւնքներով։

## ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐ

Բօնֆէրանսին նիստը յետաձգուած է այսօրվան որովհետև Անգլիան առարկութիւններ կը յարուցանէ Բ. Դրան կողմէն Բուլկրին առժամանակեայ կերպով պով կառավարելու պաշտօնով մի պատուիրակ ղրկուելուն դէմ։

Ալեքսանդր իշխանը չընդունիր դիւանագործը մինչև որ Սերպերը բոլորովին հեռանան Պուլկարիայէն և Պալկաններ մնանեն Սերպիա։

Մեծ պետութիւնները կուզեն միջամտել դիւանագործի համար և մի վեհաժողով (քոնկրէս) կազմել, Պերլինի դաշնագիրը վերաքննելու նպատակով։

Ռուսական կառավարութիւնը Սերպիան մի ծանուցագիր ղրկած է որի մէջ սաստիկ կը պարսաւէ Միլան թագաւորի ընթացքը։ կը ցուցնէ թէ ինք եղած է այդ կռուի պատճառ և վճռական խօսքերով կիմացունէ իրեն թէ պէտք է որ իւր նախկին հաստատուած վիճակն ունենալու աշխատի։

Ալեքսանդր իշխանը յայտարարած է Բ. Դրան որ սերպօ—պուլկարական պատերազմը չվերջացած, Բ. Դրան կողմէն մի առժամանակեայ կառավարիչ Բուլկրի դալը կրնայ ծանր անկարգութիւններու պատճառ դառնալ որ ինք նախապէս իմացունելով պատասխանատուութիւն չառնէր իւր վրայ։

Նոյ. 23 ին Պուլկարները մի նոր յարձակում ևս արած են Սերպերին վրայ։ Ալեքսանդր իշխանն անձամբ բանակին գլուխը կը գտնուէր։ Կռիւը չատ սաստիկ եղած է։ Պուլկարները յետ մղեցին Սերպերն Տրակօմանի կիրճին մօտիկ բռնած բոլոր դիրքերնէն։ Հետեւեալ օր չարունակելով կռիւը, Սերպերին հալածեր և անոնց ձեռքէն յետ առեր են Զարիպրօտը ուր կը գտնուի այժմ Ալեքսանդր իշխանը։

Սերպերը վիհրնը կը ռմբակոծեն այժմ. բայց դեռ յայտնի չէ թէ ինչ արդիւնք ունեցած են։

500 Սերպեր երեք օրէ ի վեր անօթի մնացած լինելով, յանձնուեր են Պուլկարներին։

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՅԵՄԲԵՐ. 17 ԷՆ 24

### ՆԵՐԱՔՈՒԹԻՒՆ

ԲՈՒՐԴ. Ա֊յս շաբաթ 700 հակի չափ միայն վաճառում եղած է, որմէ 130 հակ երկրորդ կարում կիւրճիւ B 130 BS 107½ ֆր. 300 հակ Պալտաա և Մուսուլի ապրանքները, մնացածները զանազան տեսակներէ։

ԲԱՄՊԱԿ. Հրապարակը սակաւ դրութեան մէջ է և գիները կոտրելու հակում ունին։

ՄԵՏԱՔՍԵՂԷՆ. Թէև գիներու վրայ մեծ փոփոխութիւն չը կայ բայց հրապարակը մի քիչ հանդարտած և համեմատաբար քիչ վաճառում եղած է, որոյմէ կը նշանակենք 25 հակ Սիրիայ մետաքս 47–50 ֆր. 5 հակ Պրուսա 46–48 ֆր. 2 հակ Նեվսա 38–44 ֆր. 2,000 քիլօ Սիրիայ գիլդան 7 ֆր. 2,300 քիլօ Պաղեստինի գիլդան 4½–5 ֆր. քիլօն. 4,000 քիլօ գիլդանէի զանազան գիներով։

ԿԱՆԵՓ. Պահանջը կը նուազի, 52–58 ֆր. 100 քիլօն Տաճկաստանի ապրանայ համար։

ՑՈՐԵՆ. Պահանջ կայ, 15–19 ֆր. 100 քիլօն տեսակին համեմատ։

ՎԱՐՍԱԿ (avoine). Ըստ տեսակին 12½–15½ ֆր. 100 քիլօն։

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ (maïs). Միշտ կը վնտռուի և պատրաստ ապրանքները 13¾ ֆր. կրնան արժել։

ԼՈՒԲԻԱՑ. Թայլ է, Տրապիզոնի մանրուած ապրանքները պատրաստ 24½ ֆր. 100 քիլօն։

ԿԱՆԵՓԻ ՀՈՒՆՏ (graines de chanvre). Անպտղած կը չարունակէ, 24–27 ֆր. 100 քիլօն։

ԹՈՒՉՆԱԿԵՐ (alpiste). 25–25½ ֆր. 100 քիլօն։

ՇՈՒՇՄԱՆ (sésames). Հրապարակի դրութիւնը բաւական լաւացաւ 41–41½ ֆր. 100 քիլօն։

ԽԱՇԽԱՇ. 29–30 ֆր. 100 քիլօն։

ԿՏԱՒԱՀԱՑ. Իզմիրի ծածկներու համար 28–28½ և Գեղագործներու համար 29–30 ֆր. 100 քիլօն։

ԿԱՂԻՆ. Շատ թայլ է, կտրուածները 85 և չը կտրածները 33 ֆր. 100 քիլօն։

ՄԻՐԱՆԻ ԿԱՒՏ. 50–57 ֆր. 100 ք։

ԴԵՂՆԱՀԱՑ. Թէև մի քիչ գործեր կըլլան բայց պակաս գիներով, ըստ տեսակին 100–115 ֆր. 100 քիլօն։

ՄԵՂՐԱՄԱՄ. 160–165 ֆր. 50 ք։

ԱՅԾԻ ՄՈՐՔ. 28–34 ֆր. տուզնան։

ՆԱՊԱՍՏԱԿԻ ՄՈՐՔ. 3,20–4 ֆր. քիլօն։

### ԱՐՏԱՒՈՒԹԻՒՆ

ՇԱՓԻՐ. 3 քիլանոցը 58 և 2 քիլանոցը 58½–59 ֆր. 100 քիլօն։

ՍՈՒՐՃ. Առկաւէու գործեր միայն կըլլան, Րիօի տեսակները 45–56 ֆր. 50 քիլօն։

ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ. Գոլչապան և ճերմակները 3,50–3,75 և սևերը 3,50–4,20 ֆր. քիլօն։

ՊՂՊՂ. Սեպտեմբեր 99 և Ժամա, Սամսմբա 89 ֆր. 50 քիլօն։

Գ.

## ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

**1886** ԹՈՒԱԿԱՆԻ ՅՈՒՆՎԱՐ ԱՄՍԷՆ

Ս. Ե Ր Ս Տ Ի Ն

ԿԸ ՍԿՍԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻԼ

"ՄՇԱԿ,, ԼՐԱԳԻՐԸ

ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ ՄԵԾ.

Պ. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒՆ

Մանրամասն յայտարարութիւնը կը հրատարակուի իր ժամանակին։

Հասցէ՝ Rédaction du journal **MCHAK**

**TIFLIS** *(Caucase-Russie)*,

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻՄՐ գին 50 սանթիմ.

Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ » 20 »

Ձը ծախուին Պարսկաս, «Ծրմկնիա» լրագրի խմբագրատունը։

Ծոցի բաղաքացիներին կը դրկուի փոստով, եթէ վերոյգրեալ գիներով Թրաբսանական, բրքական կամ ռուսական փոստի բղթադրոշմ դրկեն «Ծրմկնիա»ի խմբագրութեան։

## ՄԱՆՈՒԷԼ ՄՐՄԱՆՈՐԵԱՆ

ՆԿԱՐԱԴՐԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՀԱՑԱՐՆԱԿ ԳԱՒԱՌԻՍ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ

ՏԵՂԱԴՐՈՒԹԻՒՆԻՔ ՍԱՐԻՆ ԵՒ ՁՈՐԻՆ ՀՆԻՆ ԵՒ ՆՈՐԻՆ ՊԻՏԱՆԻ ԳԻՏՆՈՑ

Մաան Ա. Բ. Գ. (առարտ)

Հայարնակ գաւառաց ընդհ. նկարագրութիւնն, տեղագրութիւնն, աշխարհագրութիւնն, չէն և ամայի վանօրէից նկարագիրն, աւանդութիւնք և այլ նիւթեր պարունակող Ազգ. գործ մի է, ամենահարուստ և հետաքրքրական գրուած չլջահայեաց և չատ նուրբ տեսութեամբ արժանի ամեն Հայու յաճախակի վերծանութեան։

Կը գտնուի բոլոր գրավաճառաց քովկեդրոնասեղնն է Պօլիս Պահակ-գաւիւ հայագործի վաճառատունն դէմ Գ. էֆ. Ճանեանի վաճառատունն, թիւ 11։

Գինն — Ա. և Գ. մասերն 8 ոսկան, իսկ Բ. մասն 10 դահեկանի։

Վարժարանաց համար գոհացուցիչ զեղչ կը լինի, և յանձնարարութիւնք ևղիւս կը կատարուին։

# JOHN SARKIS

PAPASIAN

**PAPETERIE — LIBRAIRIE**

Magasin de Musique

RUE FRANQUE, PASSAGE CRAMER, 1

SMYRNE (Turquie d'Asie)

Fournitures pour Consulats, Agences, Bureaux, Écoles, etc.

Articles pour Photographes ,peintres et ingénieurs.

Cartes Géographiques et maritimes' Plans de Smyrne et photographies (vues) de différentes villes de l'Asie-Mineure.

Reliure en tous genres, et Commissoins de travaux d'imprimerie.

Tablaux, Corniches, Baguettes. *Encadrements* avec soin et précision.

*Grand assortiment de Musique* des plus renommés éditeurs et *Seul Dépôt* des éditions économiques de Ricordi, Peters et Litolff.

Instruments à Cordes, Pupitres-musique, Cordes pour Violon, Guitarre, Mandoline et Piano des meilleures fabriques d'Europe, etc.,etc.

**On se charge de toutes sortes de Commissions.**

ՏՆՕՐԻՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ· ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
*Le Gérant* : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷԻԼ
Հայերէն տպարան Մ· Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.